ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 9-Ա

<<14>> փետրվարի 2025 թվականի քաղաք Մարալիկ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ <<ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ 2025>> ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԻԹՀԱՆՔՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՆՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի դրույթով, հաշվի առնելով, որ «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող <<Գերմանական բարեկամություն 2025>> ծրագրի շրջանակներում հավանության է արժանացել Անի համայնքի Ձիթհանքովի միջնարկարգ դպրոցի շենքի 2-րդ և 3-րդ հարկերի պատուհանների նորով փոխարինելու ծրագիրը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից /հետահայում՝ Նվիրատու/ <<Գերմանական բարեկամություն 2025>> ծրագրի շրջանակներում հավանության արժանացած Անի համայնքի Ձիթհանքովի միջնարկարգ դպրոցի շենքի 2-րդ և 3-րդ հարկերի պատուհանների նորով փոխարինելու ծրագիրի իրականացմանը:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին.

Ապահովել սույն որոշման 1-ին կետով նախատեսված ծրագրի իրականացման համար համայնքից պահանջվող ծրագրի արժեքի 11 տոկոսի չափով ներդրումը՝ գումարով 400000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ և օրենքով սահմանված կարգով Նվիրատուի հետ կնքել նվիրաբերության պայմանագիր:

3. Սույն որոշման 2-րդկետով նախատեսված 400 000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ ներդրումը հատկացնել համայնքի 2025 թվականի բյուջեի գործառնական դասակարգման